Տ. ԵՂՐԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Մկրտիչ)

Ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1977 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1978 թ. մեկնել է զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո, 1980 թ., ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Մտեփանոսի տոնի օրը, Տ. Ներսես եպս. Պոզապալյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և պաշտպանել «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ձեռնադրության Մաշտոցի» զարգացումը Ժ-ԺԴ դդ.» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1984-1986 թթ. «Ներածություն Հին Կտակարանի» առարկա է դասավանդել Հոգևոր Ճեմարանում:

1986-1988 թթ. սովորել է Լենինգրադի հոգևոր ակադեմիայում:

1988 թ. նշանակվել է Լենինգրադի հոգևոր հովիվ:

2000 թ. հոկտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան:

2001 թ. ապրիլից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ: